տրեկոյինդ. — Ցիշ. ժէ. Դարի, Ա., թիւ 790։ Ձեռ. Ս. Ց. թիւ 657։

Թ. — Ցակոբ Դպիր օրինակած է հեռաւեալ գիրքերը, 1616 – 1620 ին.

1. — Մաշտոց, 1616 ին։ Ստացող՝ Մելքոն տեր. — Ցիշ. ժէ. Դարի, Ա. Թ. 794։

2. — Աւետարան, 1618 ին. Ծաղկող՝ Յովհաննէս. — Ձեռ. Ս. Ց. թիւ 2573։

3. — Քերականութիւն – Բառգիրք, 1620 ին. Ծաղկող՝ Խաչատուր Աբղ. Կեսարացի։ Ստացող՝ կաթողիկոս վարդապետ. — Ձեռ. Երևանի, թիւ 8537 և 8563։

4. — Աստուածաշունչ, 1620 ին. Ծաղկող՝ Խաչատուր Աբղ. Կեսարացի։ Պատուիրատու՝ Մելիքքաղա. — Ձեռ. Ս. Ց. Թ. 428։

Ցիշատակարանին մէջ կը կարդանք սա տողերը. «... յիշեցէք ի Տէր։ Նաև վարդապետն մեր և զմանկունս դպրատունս, որ համակամութեամբ կամք ի գուութիւն եկեղեցւոյ, ընդ հովտնեաւ Ս. Նիկողայոսի». — Ցուցակ Ձեռ. Ս. Ցակոբեանց, Բ. Հատոր, 1967, էջ 386։

Ժ. — Սիմէոն Երէց Տիւրիկցի, որդի տէր Ցովանէսի, աշակերտ Բաբերդցի Առաքել տարկաւագի, օրինակած է Մեկնութիւն Սաղմոսաց՝ վարդան վարդապետի, 1619 ին. — Ցիշ. ժէ. Դարի, Ա., թիւ 924։ Ձեռ. Երևանի, թիւ 1182։

ԺԱ. — Խաչատուր Աբղ. Կեսարացի ծաղկած է 1620 ին.

1. — Աստուածաշունչ, օրինակուած Ցակոբ Դպրի կողմէ, Սպահանէն Մելիքաղայի պատուէրով. — Ձեռ. Ս. Ց. թիւ 428։

2. — Քերականութիւն – Բառգիրք։ Գրիչ՝ Ցակոբ Դպիր։ Ստացող՝ կաթողիկոս վարդապետ. — Ձեռ. Երևանի, թիւ 8537 և 8563։

3. — Աստուածաշունչ։ Գրիչ և Ստացող՝ Գրիգոր Վրդ. Դարանաղեցի. — Ձեռ. Ս. Ց. թիւ 3043։

ԺԲ. — Յոհաննէս Դպիր Լիւցի, 1621 ին օրինակած է.

1. — Ժողովածու, խմբագրող՝ Ասաք Սեբաստացի, «ի վայելումն տէր Խաչատուր սրբազանութեանդ կրօնաւորին». — Ցիշ. ժէ. Դարի, Բ. Հատոր, թիւ 9։ Ձեռ. Երևանի, թիւ 3982։

2. — Ժողովածու, «ի դպրատանն Ս. Նիկողայոսի Սքանչելագործին», «ի խընդրոյ աստուածընկալ և սրբազանեալ Խաչատուր կոչեցեալ կրօնաւորին կեսարացոյ, լցեալ չնորհիւ իմաստութեամբ և առաւելեալ ամենայն գործովք առաքինութեամբն». — Ցիշ. ժէ. Դարի, Բ. թիւ 21։ Ձեռ. Երևանի, թիւ 1246։

ԺԳ. — Գէորգ Աբղ. Տիւրիկցի, որդի Ստեփանոսի, աշակերտ Խաչատուր քաջ բարուեպետի (կեսարացի), և գրիչ Նազարէթ քահանայի. օրինակած է ժապավենաձև մը 1621 – 1624 ին. «Սկիզբն գրականութեան սորին եղև ի մայրաքաղաքն Բուլղարիայ, ի դուռն Ս. Նիկողայոսի Զմիւռնոյ Հայրապետին ... և յետ չորից ամաց ապա աւարտեալ եղև ի ՌՀԴ թվին յԱսպահան, «ի դուռն սուրբ մենաստանին, որ կոչի Ս. Փրկիչ, առ ատոն ... սուրբ բարուեպետին Խաչատուրի». — Ցիշ. ժէ. Դարի, Բ., թիւ 195։ Ձեռ. Երևանի, թիւ 2370։

ԺԴ. — Խաչատուր Աբղ. Սեբաստացի, Գրիչ, որդի Ցակոբի և Մարիամի, 1623 ին օրինակած է վարդան վարդապետի Սաղմոսաց Մեկնութեան «Տէր ապաւէն» և «Խոստովան» կանոնները. — Ձեռ. Ս. Ցակոբեանց, թիւ 3098, էջ 651։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐԱՅԱՏ ՁԵՌԱԳԻՐ

Թել–Ավիվում է ապրում Սքանչելաւեան երկրներից այստեղ ներգաղթած Գր. Իսէէն Վոլֆսոնը (Eugène Wolfson)։ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին առընթեր Հայ մշակոյթի և արուեստի նորաբաց թանգարանն այցելած ժամանակ նա թանգարանի պատասխանատու Գր. Գ. Հինդլեանին յայտնեց, թէ ինքը Հայերէն մի ձեռագիր ունի և պատրաստ է այն տրամադրել թանգարանին։

Հաճելի այս լուրը առնելուց յետոյ, Գր. Գ. Հինդլեանի հետ անմիջապէս փութացինք Թել–Ավիվ։ Գր. Վոլֆսոնի բնա-

digitised by A.R.A.R.@

կարանը մի գողարիկ թանգարան է, ինքը՝ բազմակողմանի զարգացած անձնաւորութիւն։ Ձեռագրի մասին նա մեզ յայտնեց, որ այն իրեն նուիրել են Լեհահատանում, 1946ին, պատերազմից անմիջապէս յետոյ։

Այս առիթով շնորհակալութիւն ենք յայտնում Պր. Վոլֆսօնին, իր ինքնաբուխ արժէքաւոր նուէրի համար։

* * *

Տեղ՝ *Լեհահատան (Լվով)։* Ժամանակ՝ 1757։ Գրիչ՝ *Տէր Աստուածատուր, որդի Օվանէսի։* Ստացող՝ *Գրչի քոյրը՝ Ս. Պէնէտիքթոսի ուխտի կոյսերից՝ Անդոնինայ։* Թերթ՝ 170 (*Ձգրուած՝ 1բ–5բ, 105բ–166բ, 124բ, 125բ, 165բ, 168ա–170բ*)։ Գրակի՝ 13, *իւրաքանչիւրը՝* 12 *թերթ։ Թուղթ։* Մեծութիւն՝ 19 × 15.5։ Գիր՝ *նօտրգիր։ Խորագրերը և սկզբնատառերը կարմրագեղով։* Գրութիւն՝ *միասիւն։* Կազմ՝ *լաթապատ ստուարաթուղթ։ Առաջին փեղկի վրայ՝ դրոշմատիպ խաչ։* Վիճակ՝ *գոհացուցիչ։ Քիչ խանգարած է և ցեցակերութեան հետքերը բաւական չատ են։*

Թերթ 1ից առաջ ունի 2 ձեռագիր և 6 տպագիր թերթիկներ կազմից անջատ։ Ձեռագիր թերթերը այլուսա են. բովանդակում են քան ձայների և չաքթաւայ օրերի բաժանուած Օրհնութիւնների ու Հարցերի հայերէն ցանկեր։ Տպագիր թերթերից 5ի վրայ կան օրբաստակերներ, 3ը՝ լեհերէն, 2ը՝ հայերէն մակագրութիւններով։ Տպագիրներից երեք էջերը հնատիպ Սաղմոսարանից, մէկ էջը հնատիպ Խորհրդատետրից պահպանուած հատուածներ են պարունակում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ(*). —

1ա–1ա, Մանկանիմ ի մեջ ուրարքի մարմնոյ Տեառն — *Տաս կենաց ի մէջ եկեղեցւոյ ։։ զի օրհնեցուք զքեզ այժմ և յաւիտեան։*

7ա–7բ, *Himn do Swirti Anni* (*լեհերէն*) — Wof jerguk amusnagani ... Sch-[n]orhiecek inc zHisus Der im։ (*Լեհատառ հայերէն։*)

8ա–8բ, *Astudzow dacuk kohutiun. Dah zdzynyntian Diarn.*
Manug dzynaf i Piedlehem ... Ortniescuk surp zierortutiun։ (*Լեհատառ հայերէն*)։

9ա–9բ, Երգ ասցից Տէրունականաց։ Ճրագալուցի Տեառն ի Դեկտեմբերի ԻԴ (24)։
Հայրըն գրեցեալ անզուգական ...
[եւ զանհանգէտ խոնարհութիւնդ]։

9բ–10ա, [Ի ճրագալուցի]
Դու բէթլէհէմ առն եփրաթայ ...։
Սփոփանաց լրումն լեր։

10ա–11ա, Մինդեան Տեառն Ցիսուսի Քրիստոսի ի Դեկտեմբերի ԻԵ (25) —
Անմայր Մնուանդ Հօր անսկզբան ...
Այժմ և յաւէտ աւէլուխայ։

11ա–12բ, Թլփատութիւն Տեառն ի Յունվարի Ա (1) —
Ի ըսկզբան անօրէնութեանդ ...
Զանօրէնութիւնդ վերայարգեմ։

12ա–13բ, Յայտնութեան Տեառն ի Յունվարի 6 —
Ցնծացուք արդ ամենեքեան ...
Բանից, գօրծոց, նաև՝ մտաց։

13բ–14բ, Կիրակի Առաւեւոնեաց
Ուրախ լեր դուստր Սիօնի ...
Զարչարանացդ երկրպագեմ։

14բ–15բ, Մեծի Հինգշաբթու Ընթերեաց Տեառն
Այսօր զբաւ օրինակաց ...
Գթա Քրիստոս և ողորմեա։

16ա–17բ, Մեծի Ուրբաթուն
Գուշակութիւնք տեսանողաց ...
Մտանեամբ քով դիս կենդանոցեան։

17բ–18բ, Մեծի Շաբաթուն
Կենդանատուն ամենեցուն ...
Լուսայդ փառաց արժանս տար։

18բ–19բ, Պասէքի Յարութեան Տեառն
Յարեաւ Քրիստոս ի մեռելոց ...
Յարեաւ Քրիստոս Աւէլուիայ։

19բ–20բ, Համբարձման Տեառն
Ցեռ փառաւորի Յարութեան ...
Խնամեա, տածեա զքոյս օրհնաբանս։

20բ–21բ, Գալստեան ոգւոյն սրբոյ
Ամենասուրբ Աստուած ոգի ...
Զնուբ սիրոյդ վառեա ի մեզ։

21բ–22բ, Ամենարբոյ Երեւոյութեան
Սրբազնասուրբ Երրորդութիւն ...
Տածեա, կեցո և ողորմեա։

(*) *Համեմատիր Հ. Ն. Ակինեան, Ցուցակ Հայերէն Ձեռագրաց ի Լվով և ի Սանոկիաւով, Վիեննա, 1961, էջ 38–40։*

digitised by A.R.A.R.@

22բ–23բ, Էվխարիս Տէր մարմնոյ եւ արեան Տեառն
Արդ, օրհնեսցուք ամենեքեան ...
եւ զգոհութիւնդ վերառաքեմք։
23բ–24բ, Պայծառակերպութեան Տեառն
Ցայսմ Ցիսուս աշակերտաց ...
Տեսանել ի քեզ ի փառս քո։
24բ–25բ, Սրբոյ Խաչին Վերացուցման
ի սկզբանէ նախապատկեր ...
Ցընդդիմութիւնս պատսպարեա։
25բ–26բ, Տերունական Սկսելեցւոյ
Զուարճացիր հարսն Քրիստոսի ...
Գղերբ, նաեւ՝ ժողովրդով։
26բ–27բ, Ցրղացման Ամենեռանուեղոյ Կուսին Մարիամու
Ցաւիսենից Աստուած ընտրեաց ...
[Ցղացեալդ այսօր առանց մեղաց]։
27բ–28բ, Ծննդեանն Աստուածածնայ. Narodzenia Nay. Panny
Մաղեցաւ արդ արմատն Եսայեայ ...
Տուր ինձ զուժ ընդդէմ թշնամեաց։
28բ–29բ, Ընծայեցման Աստուածածնայ
Ընտիր նուէր Երրորդութեան ...
[Զչերմեռանդ միշտ ծառայ քո]։
29բ–30բ, Աւետման Աստուածածնայ
Աղերս քս, ո՞վ կոյս սրբազգեաց ...
[Զի տէր լեցի ինձ ողորմած]։
31ա–31բ, Այցելութեան Աստուածածնայ. Nawidzenia V. Nay. Panny
Անհամեմատ խոնարհութիւն ...
[Ներկայութեամբդ կակղացո]։
32ա–32բ, Մաքրութեան Տեառն՝ Տեառն ընդառաջին. Gromniezny nay Panny.
Միայն մաքուրդ ի մէնջ կանանց ...
Մաքրեա զխորհուրդս, գործս և զբան։
33ա–33բ, Վերափոխման ամենաբեռնուեղոյ կուսին. Wniebo wziecia nay Panny.
Վերնականացքն ասէնջ փառաց ...
[Զսիրտ իմ ընկալ քեզ գերեզման]։
34ա–34բ, [Վասն Յովսեփայ]. Na S. Jozefa
Յովսէփ, որդի մեծի Դաւթի ...
ի ժամ մահուան հոգեվարքին։
35ա–35ա, Մանկուեմ. Mankunk i Hamparci Na S. Jozefa
Պարծանք տոհմին Աբրահամու ... առ նա լեր միշտ բարեխօս։
35ա–35ա, Մանկուեմ. Na S. Kaietana
Պրսակացեալ հարսին ... [ի մեր անձկութիւնս]։
35բ–35բ, Մանկուեմ. Na S. Wawrzynca
Քաջ նահատակ Քրիստոսի սուրբ Լաւրէնտիոս ... միշտ բարեխօսեա։
(34ա–35բ նիւթերը գրուած են այլ գրով՝ ձեռագրի վերանորոգութեան ժամանակ գեղեցուած նոր թերթերի վրայ)։
36ա–36բ, Երգ հրեշտակաց. Suretych Aniotow
Դասք իննեկի սգեղինաց ...
ի մահուան խնամակալեա։
37ա–37բ, Մարգարէից. Na S. Prorokow. S. Jana
Նախընտրեցեալք ի սկզբանէ ...
ի հնութենէ զմեզ նորոգեա։
38ա–38բ, Առաքելոց. S. Apostolow
Նախքան զսկ[ի]զբն Արարածոց ...։
Որդւոց ձերոց խնամածեցէք։
39ա–40ա, Պետրոսի եւ Պօղոսի Առաքելոցն. S. Piotra y Pawla apostolow
կաթուղիկէ եկեղեցի ...
Հայցմամբ սոցա ի մեզ գթա։
40ա–40բ, Մարտիրոսաց. S. Menczenikow Na S. Wawrzynca
Ով երանեալք գունդք վկայից ...
[Եւ յասեալսցս ազատեցէք]։
41ա–41բ, Քահանայապետաց վկայից. S. Byskupow
Փառք և պատիւ և զօրութիւն ...
եւ առ տէր բարեխօսեցէք։
42ա–42բ, Միոյ քահանայապետի վկայի. Jednego Byskupa
Տօնէ այսօր եկեղեցի ...
Զի մանանկիցք լիցուք վարուց։
43ա–43բ, Միոյ քահանայապետի խոստովանողի. Jednego Byskupa Konfesora. Na S. Kaietana
Հոգւոյն սրբոյ նախընտրեցար ...
ի փառս քոյս վերակոչեա։
44ա–44բ, Բազմայ քահանայապետաց խոստովանողաց եւ ի սոցա սրբոց ժողովոց. Wiele (?) Byskup Konfesorow
Ցնծութեան ձայն այսօր հնչեաց ...
Զեկեղեցիդ անբիծ պահեա։
45ա–45բ, Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ելանելոյն ի Վիրապէն, մտանելոյն ի Վիրապն. do S. Grzegorza
Ուրախութեամբ այսօր տօնէ ...
[Լեր բարեխօս միշտ վասն մեր]։

digitised by A.R.A.R.@

46ա–46բ, Գիւտի նախարար Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի· Znalezienia Relikwy S. Grzegorza
Վաղ երջանկութեան Արամեանց ...
ի յանցանաց զմեզ մաքրեա։

47ա–48բ, Սրբոց Վարդապետաց· S. Doktorow
Նախասահման կամն Աստուծոյ ...
Զի բանից քոց եմ աշակերտ։

48ա–49ա, Սրբոց Թագաւորաց· S. Krolow
Հրաշակերտողդ բոլորից ...
[եւ անվրդով զմեզ պահեա]։

49ա–50ա, Անապատականաց եւ այլոց կրօնաւորաց· S. Pustelnikow
Ընտրելոց խումբք երջանկաց ...
ԶԱստուած ընդ մեզ հաշտեցուցէք։

50ա–51ա, Կուսից վկայուհեաց եւ խոստովանուհեաց· S. Panien menezeniezek
Եկեղեցի կաթուղիկէ ...
[Միրով զբաւ բորբոքեցէք]։

51ա–52ա, Այրեաց եւ այլոց արբուհեաց· Wdow y innych
Ընտիր որոշդ Քրիստոսի ...
Արժանս առնել իւրոյ տեսլոյն։

52ա–53ա, Համօրինաց Սրբոց· Wzsystkich swietych
Այսօր մայր սուրբ եկեղեցի ...
Մաքրեա զմեզ յախտից մերոց։

53ա–54ա, Համօրինաց Ննջեցելոց· Za wzsystkich zmarmych
Աստուած գթած և հեզասիրտ ...
[Զլոյս փառաց նոցա շնորհեա]։

54ա–54ա, Վասն զանազան ասնից ասելի է այս տեր ողորմեան
Աստուածածին ամէնօրհնեալ ...
Սուրբ Աստուածածին բարեխօսեա։

54ա–56բ, Խաչին Քրիստոսի
Գովեալ ես դու փայտ փրկութեան ...
ի գիշերիս ազգամղձին։
(Այսպէս յաղօրդաբար՝ Առաքելոց, Մարգարէից, Յովհաննու Մկրտչին, Ս. Ստեփանոսին, Գրիգոր Լուսաւորչին, Մարտիրոսաց, Ճգնաւորաց, Կուսանաց, Հրեշտակաց, Առ Աստուած, Խաչին Քրիստոսի, Հայրապետաց նուիրուած «Տէր ողորմեաներ»։)

57ա–59ա, [Գրիգորի Անաւարզեցւոյ] Օրհնութիւն Թլփատութեան Տեառն. *Ակ Որ խոստացար տէր ի Քեզ ... օրհնութիւն քեզ տէր երգեսցեն մանկունք։*

59ա–61ա, Հարց Դկ — Անընկիզբն Աստուած բարձր արարէք ըզնա յաւիտեան։
Մեծացուսցէ — Ընդդա բերկրեալ Աստուածածին ... զմայրըդ փրկչին մեծացուցանեմք
Ողորմեա — Բոսեալ զնրզովքն ... *կոյս Մարիամ Աստուածածին*
Տեր յերկնից — Զօրաց երկնից օրհնաբանեալ ... *կեցո զմեզ ծնող Քրիստոսի։*
[Ճաշու] — *Կամաւ յանձն առեր ...*
[քամ երկիրպագանեմք]։ (Տե՛ս Թ. 54բ–58ա)։
Համբարձի — Դասք երկնաւորացն ... *զմեզ փրկել ի յանչէջ հրոյն։ (Սոյն Հարցի ծայրակապը (ակրոստիկոս) կազմում է՝ Արքայն խնդրեաց զբանս՝ կոստանդիանոս)։*

61բ–65ա, [Գրիգորի Անաւարզեցւոյ] Ամենասարբոյ Տէրարդութեան. Օրհնութիւն. Դկ — Յերիս անձինս բաժանեալ ... *ցուցեր զոր ազատեալ նախկին։*
Հարց — Անակիզբն լոյս սկզբնական ... *բարձր արարէք ըզնա յաւիտեան*
Մեծացուսցէ — *Մայր և կոյս ազատեալ Քրիստոսի ... քեզ երանեն ամենայն ազինք։*
Ողորմեա — *Խորհրդաբար ի գիրս Մովսէս ... խնայեա ի մեզ սուրբ Երրորդութիւն։*
Տեր յերկնից — *Բամից դասուց Սերոբէից ... մաղթեան վասն մեր։*
Համբարձի — *Բամեալ ընդ զօրս ... խնայեալ ի մեզ սուրբ Երրորդութիւն։*
(Սոյն Օրհնութեան ծայրակապը՝ Յոհաննէս, Հարցինը՝ Արքայն խնդրէրեաց։)

65ա–68ա, [Գրիգորի Նաւարզեցւոյ] Ամենայաւուրբ մարմնոյ եւ արեան Տեառն Օրհնութիւն — *Գերարհրաշ խորհրդոց անգին ... պատիւ տացուք յաւէտագին։*
Հարց — *Որ գերաշէի արքայութիւն ... բարձր արարէք զնա յաւիտեան։*
Մեծացուսցէ — *Ուրախ լեր Մարիամ ... ըզքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։*

digitised by A.R.A.R.@

Ողորմեա — *Ո՜վ սրբազան խրախճանութիւն ... [ճաշակել զքաղցրութիւն քո և ողորմեա]։*

Տէր երկնից — *Օրհնեմք զքեզ հայրդ ... և հրաշագործողին առաք զփառս ի փարձունքս։*

Համբարձի — *Բանն ի Հօրէ ... պարգևեսցէ յարքայութեան։*

68ա–73ա, [Գրիգորի Անաւարզեցւոյ] Ամենայն Սրբոց Օրհնութիւն — *Անճառ խորոց ... Աստուածածին առ քոյդ միածինն։*

(Տուները սկսւում են յաջորդաբար Ա. Բ. Գ. ... Ք–ով։)

Հարց — *Ճշմարտապէս զուխտ քո [բարձր արարէք ըզնա յաւիտեան]։*

Մեծացուցք — *Ուրախացիր Աստուածածին ... կեցուցանել ըզմեզ։*

Ողորմեա — *Զաբշարանաք ընտրեալքն քո ... Ողորմեա մեզ որդի Աստուծոյ։*

Տէր երկնից — *Սուրբ ի սրբոց ... և մեզ զփառս փրկարձունս։*

Մանկուցիր եւ Համբարձի — *Փարատեալով զհիւանդութիւնս ... զանձինս մեր բժշկեա։*

(Նոյնպէս տուները սկսւում են յաջորդաբար Ա. Բ. Գ. ... Ք–ով։)

73ա–78ա, [Գրիգորի Անաւարզեցւոյ՝ Ընծայեցման եռանուագ Կոյսին Օրհնութիւն — *Գովեմք զնայրըդ ... յերկնից տաճարէդ պարիլ (թեր)։*

(Մայրական գիրերը կազմում են «Գրիգորի է ե[ղեալ]»։ Այսահղ դրուած է աւելի ուշ ժամանակի մի կիսաթերթի վրայ լեհատառ հայերէնով։ Antranik arjal aysor ... sirpic arakiac 74ա–74բ)։

Հարց — *Որ զխոստումն առ հարսն ... սրբութեան իւրոյ։*

Մեծացուցք — *Աստուածածին բարձրագոյն ... քոյոր հնչմամբ այսօր զքեզ մեծացուցանեմք։*

Ողորմեայ — *Որ զհին տաճարն ... վասն անձանց մերոց։*

Տէր յերկնից — *Ցընծայ այսօր ... զփառս իւր փեսայիդ։*

Համբարձի — *Այսօր երկինքն ... զմեզ միշտ արդեալ։*

78ա–80բ, [Գրիգորի Անաւարզեցւոյ] Անուրաց յրդութեան ամենա[ս]երանուեալ Կուսին Մարիամա՝ Օրհնութիւն — *Կարողաբար զօրութեամբ ... Հայցեա մեզ ձիր քաւութեան։*

Հարց — *Այսօր ի Հրոյն ... բարձարարէք [զնա] յաւիտեան։*

Մեծացուցք — *Հրեշտակն ամաչ ... Աստուածածին կոյս։*

Ողորմեա — *Որ զհին կտակն ... օրհնիչըն Ցոլութեան։*

Տէր յերկնից — *Գոհդ հրեշտակաց ... Որդեայդ մաղթող լեր։*

(Օրհնութեան և Հարցի տուներուն ծայրակապը՝ կոստանդին արքայ Հայոց է Գրի[գոր]։)

81ա–85ա, [Գրիգորի Անաւարզեցւոյ] Այցելութեան եռանիւղոյն Կուսին Մարիամայ Օրհնութիւն — *Օրհնեմք զօրհնալդ ... անհանկիսատ հայցմամբ։*

Հարց — *Որ զխոստումն առ Աբրահամ ... [անճառ բանին զմիշտ կոյս]։*

Մեծացուցք — *Անարատ կոյս ... մեծացուցանեմք։*

Ողորմեա — *Զքեզ ողջունեմք ... քաղցր կոյս Մարիամ։*

Տէր յերկնից — *Դշխոյ երկնից ... փառք ի բարձունս։*

Համբարձի — *Ողջոյն քեզ աստղ ... երիցըն մի պարտութիւն։*

85բ–89ա, [Սրբուհոյ Կուսին Մեղասիկիայ] Օրհնութիւն — *Խնդա քաղաքն ... ի պատրանաց բանտարկուին։*

Հարց — *Ընտրեալ յորովայնէ ... ըզնա յաւիտեան։*

Մեծացուցք — *Աստուածածին մայր ... զմիածին քո զորդին։*

Ողորմեա — *Բազումողորմ աչք ... քում ողորմութեան։*

Տէր երկնից — *Ընդ անթիւ կրօնաղեաց (?) ... գովելով ասեմք փառք։*

Մանկուցիր եւ Համբարձի — *Նոր դրախտ զարմանալի ... երկնաւորէն ընկալեալ։*

90ա–90բ, Ի ծանի սրբոյ հօրն Պենեդիքտոսի *(Զկնի Զարթուցեալքին երգ)* — *Երանելեաց երանագոյն ... Որպէս առաւգիւ երանեալ հայրդ։*

digitised by A.R.A.R.@

89բ–94բ, [Սրբոյն Պենեսիքիոսի] Օրհնութիւն — Ցուցեալ սրբոյ նախնեաց ... բարեխօս մեր առ Քրիստոս։
(Վերոյգրեալ չափածոյ երգը (90ա–90բ) հետագային ընդմիջարկուած է այստեղ. այլ թուղթի վրայ է և այլ գիրով գրուած)։
Հարց — Հրաշակերտողդ համայնից ... [ըզնա յաւիտեան]։
Մեծացուցէ — Դշխոյ պանծալի ... մեծացուցանեմք։
Ողորմեա — Բանդ Պետրոսի հրամայեցէր ... [և մեզ ողորմեա]։
Տէր յերկնից — Սրբազնասրբով աղօթիւ ... ի վեր առաքեցուք։
Մանկունք — Ով բարութեան ոգւոյդ ... իւրովք Սուրբ եկեղեցի։
Համբարձի — Արդիւնամեծ հաւատարիմ ... զկեանն անվաղճան։
95ա–97բ, Սրբոյն Նիկողայոսի Զմիռնացւոյ Եպիսկոպոսի՝ Օրհնութիւն — Ինն[ա]մոց քոց միշտ ... հայցեա վասն մեր։
Հարց — Հին աւուրց Աստուած ... զբկխումն ի հօրէ և որդւոյ։
Ողորմեա — Հօր բան բանիւ ... մեղաց ազատեա։
Տէր երկնից — Որ զԹշնամին մեր ... երգեմք զօր[հ]նութիւն։
Համբարձի — Այսօր հրեշտակաց ... հայցեա վասն մեր։
Մանկունք — Երկնայնով մաքրութեամբ ... վասն մեր, ո՞վ կոյս։
(Օրհնութեան և Հարցի տուներուն ծայրակապը՝ «Ինդր ... Հայոցս Հեթումն արքայն ... եաց»)։
98ա–101բ, Սրբոյն Լեսնի մեծի քահանայապետին Հռոմայ՝ Օրհնութիւն — Սրբազնասուրբ Երրորդութիւն ... սիրոյ զինուք վառիլ։
Հարց — Օրհնեալ եղ տէր Աստուած ... բարձր արացուք։
Մեծացուցէ — Աստուածածին մայր ... երկնի դշխոյն։
Ողորմեա — Արդ թէպէտ յայնժամ ... հաւատ սիրեա։
Տէր երկնից — Եռաչաք ազանդ ... վեր երթեցուք։
Մանկունք — Հերքեցեալոյ չարափառին ... իրականս վերածիցիմք։
(Տուներուն ծայրակապը՝ Սրբոյն Լէոնի մեծի քահանայապետին Հռօ (?) երգ։)
102ա–105ա, Սրբոյն Բասեղի եպիսկոպոսին Կեսարու՝ Օրհնութիւն — Այսօր ցնծութեամբ ... Աստուածածին երանեալ։
Հարց — Որ զնախնեաց Հարցն ... զնա [յաւիտեան]։ (Մեծացուցէ չիք)։
Ողորմեա — Որ կրկնակի ոգւոյդ ... վասն մեր ով կոյս։
Տէր երկնից — Այսօր ընդ անմարմնոց ... ի բարձունս դրուատէ։
Մանկունք — Լուսապայծառ իմաստունք ... սորա խնդրեսցուք։
107ա–124ա Պատշաճ Նոչեցելոց
Ինչ վայելէ Աստուած օրհնութիւն զմեզ ի պատրանաց բանասրկութիւն։
(Սոյն ընդարձակ հատուածը ընդգրկում է Հայաստանեայց եկեղեցւոյ Հանգստեան շարականները, բաժանուած ըստ 8 ձայների՝ Ա.Զ, Ակ, ...։ Իւրաքանչիւր բաժանումունի «Պաշտօն Ննջեցելոց» խորագիրը։)
126ա–128ա, [Ակրոսի առ. Աստուածածինն] — Տէր ողորմեայ ... Որդւոյ քոյին կամացն. ամէն։
128բ–133ա, [Ակրոսի առ. Աստուածածինն] — Տէր ողորմեայ ... Քրիստոսիս տէրամբ մերով. ամէն։
133բ–140ա, [Ակրոսի առ. Սուրբս] — Տէր ողորմեայ ... հանգիցեն ի խաղաղութեան։
140բ–144բ, [Ակրոսի առ. Հրեշտակս] — Տէր ողորմեայ ... Ուղղաւորեաց և կառավարեաց։
145ա–148ա, [Ակրոսի վասն Հայոց դրոցն] — Տէր ողորմեայ ... Հանդերձելումն յաւիտեանս յաւիտենից։
148բ–151բ, [Ակրոսի վասն հոգւոց ննջեցելոց] — Տէր ողորմեայ ... հանգիցեն ի խաղաղութեան. ամէն։
152ա–154ա, [Ակրոսի առ. Սուրբն Յովսէփ] — Տէր ողորմեայ ... Աստուած ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ը.— Ի ԿԻՆՆ ՊՈՌՆԻԿ

Երանելոյն Թէոփիլոսի՝ Ասուածաբան եւ բանիբուն Վարդապետի ասացեալ յտուեսարանական պատմութենէ, Ի կինն պոռնիկ, որ արդարացաւ ուծմամբ իւր(ւ)ոյն:

Եւ արդ ինձ ապաստան լինել պարտ է յանբաւ մարդասիրութիւնդ քո, որ վասն իմ զայս ամենայն կրել հաճեցար. զի ոչ առնես անտես զեղկելիս եւ զթշուառեալս, ոչ անտես առնես զծանրացեալս զանազան մեղաւք. ոչ առնես անտես զաղտեղացեալս պէս պէս յանցանաւք, ոչ անտես առնես զողորմելիս յիշեալ յանբաւ ողորմութիւնդ քո, մարդասէր Տէր, ոչ անտես առնես զաղախին քո զյանցաւորս, որ վասն յանցաւորացս անհամեմատելիդ համեմատեցար մարմնով:

Իբրեւ զայս ամենայն աղաւթեաց պոռնիկն երանելի՝ համարձակեցաւ մտանել ի տուն Սիմոնի բորոտին: Որպէս եւ ասէ աւետարանիչն Ղուկաս. Իբրեւ գիտաց եթէ բազմեալ է Յիսուս ի տան Սիմոնի փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, կայր յետոյ առ ոտս նորա, լայր եւ արտասուաւքն թանայր զոտս նորա, եւ համբուրէր եւ ուծանէր իւղովն եւ ասէր. ընկալ, Տէր, եւ մի անտես առներ եւ մի մերժեր զիս, Տէր Աստուած իմ. զի լուայ ի քէն թէ՝ զեկեալն առ իս ոչ հանից արտաքս: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, անոխակալ Տէր, զի լուայ ի քէն ասելով, թէ ոչ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս յապաշխարութիւն: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, բազմագութ Տէր, զի լուայ ի քէն թէ՝ մաքսաւորք եւ պոռնիկք մտցեն յարքայութիւնն երկնից: Ընկալ Տէր, եւ մի անտես առներ զաղախին քո, ողորմած Տէր, որ ոչ անտես արարեր զաղաւանս կնոջ քանանացւոյն: Ընկալ Տէր, եւ մի անտես առներ զաղախին քո, մարդասէր Տէր, որ ոչ անտես արարեր զկինն տեռատես, առ ի բժշկել զհոսումն արեան նորա: Ընկալ եւ մի մերժեր զաղախին քո, զթած Տէր, որ զմիւս այլ պոռնիկն՝ մատամբ գրոյ քո ջնջեցեր զմեղս նորա: Ընկալ եւ մի մերժեր զիս, բազումողորմ Տէր, որ ընդունեցար զմաքսաւորն աշակե[ր]ս քեզ: Ընկալ եւ զիս Տէր,

---

154բ–157բ, [Աղօթք առ Տէրն մեր Յիսուս] — *Տէր ողորմեայ ... այսմ յետէ մինչեւ յաւիտեան:*

158ա–161բ, [Աղօթք առ նահապետն Պենեփիքոս] — *Տէր ողորմեայ ... ոգւոյն սրբոյ ընդ ամենայն յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

162ա–162բ, [Շարական ի վերայ Սրբոյն Լորենցիոսի] — *Բաջդ նահատակ ... միշտ բարեխ[օս]եայ:*

163ա–164բ, Յանկէ Գլխոց (*միայն լեհերէն*):

166ա–167բ, Յիշատակարան (*լեհերէն*):

Յիշատակարան

6ա, *Յիշատակ է երգարանս այս ձայնաւոր ազօթից, ընդ որում գրեցի ես՝ Տէր Ա[ա]վածատուր՝ որդի Օվանիսի պարոնը (Ընդլուսած է դիտաւորեալ — Փ. Ա.) յիշատակ քրոջ իմոյ Անգօնինային՝ կոյսոյ Սրբոյն Պէնէտիքթոսի Հայոց, ի փառս ամենասուրբ Երրորդութեան և ի պատիւ Վերափոխման կուսոյն Մարիամայ և ամենից սրբոց: Բայց քանիցս որ անգամ կարդացէք, զանուանն ոչ մոռացէք աղօթից ձերոց: Ցամի Տեառն 1757, լատինացւոց օրն՝ 8-ին Հոկտեմբերի:*

(*Երկու տող՝ լեհերէն, ստացողի մասին, ինչ որ հայերէնում է*):

ՓԱՇԼԱԿ ԱՆԹԱՊԵԱՆ

digitised by A.R.A.R.@